ՀԱՐԿԱՎՈՐ ԵՆ ԿԱՑՈՒՆ ԵՐԱԺԻՇՏՆԵՐ

Երկուշաբթի օրը՝ հոկտեմբերի 2-ին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի երկրորդ նստաշրջանը վերսկսեց աշխատանքը: ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի նախագահ Ն. Ռիժկովը երկրի կառավարության անունից դեպուտատների քննարկմանը ներկայացրեց հինգ հիմնարար օրինագծերից բաղկացած ծրար: Դրանք են՝ սեփականության մասին, հողի, վարձակալման, միասնական հարկային համակարգի, սոցիալիստական ձեռնարկության մասին օրինագծերը: Զեկուցողի կարծիքով այդ փաստաթղթերը պետք է դառնան երկրի էկոնոմիկայի արմատական վերակառուցման նոր փուլի հիմքը:

Զեկուցումից հետո նստաշրջանում ծավալվեց շահագրգիռ քննարկում, որից հետո Գերագույն խորհուրդը իր մշտական կոմիտեներին ու հանձնաժողովներին հանձնարարեց ուսումնասիրել օրինագծերը, լրամշակել դրանք և ներկայացնել նստաշրջանի հաստատմանը:

Երեկոյան նիստում լսվեց երկաթուղիների և էկոնոմիկայի վիճակի հարցը: Տրանսպորտի և արդյունաբերության անխափան աշխատանքի ապահովման և կայունացման վերաբերյալ ինֆորմացիայով և առաջարկություններով հանդես եկավ ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի նախագահի առաջին տեղակալ Լ. Վորոնինը: Համառոտակի բնութագրելով երկրի տարբեր ռեգիոններում և մասնավորապես ադրբեջանական երկաթուղում գործադուլի հետևանքով ստեղծված իրավիճակը, նա ասաց.

— Հատկապես արտակարգ իրավիճակ է ստեղծվել ադրբեջանական և անդրկովկասյան երկաթուղիներում, որտեղ տեղի են ունենում տրանսպորտի աշխատանքի ուղղակի շրջափակում, երկաթգծերի քանդում, կամուրջների պայթեցումներ, գնացքների գնդակոծություններ: Դրա հետևանքով օգոստոս-սեպտեմբերին Հայաստան չի մտել պարենով, վառելիքով, ինչպես նաև շինանյութերով բեռնված մոտ 32 հազար վագոն, որը լրջորեն դժվարացրել է վերականգնման աշխատանքները երկրաշարժի գոտում:

Հայաստանի դեպուտատների անունից ելույթ ունեցավ Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության նախագահ Հ. Ոսկանյանը:

— Մեր նստաշրջանի աշխատանքի առաջին օրը Հայկական ԽՍՀ-ի ժողովրդական դեպուտատները առաջարկեցին շտապ կարգով քննության առնել Ադրբեջանական ԽՍՀ-ի կողմից Հայաստանի և ԼՂԻՄ-ի տնտեսական շրջափակման հարցը,— ասաց նա: — Մենք պահանջում էինք քաղաքական գնահատական տալ այդ հակամարդկային և հակաիրավական քայլին, անհապաղ միջոցներ ձեռնարկել շրջափակումը վերացնելու համար:

Անցել է մեկ շաբաթ: Բանականության կոչերը ապարդյուն են անցել, երկու-երեք օրում վճռական քայլերի դիմելու խոստումները չեն կատարվել: Դա կարելի էր ընդունել: Չէ որ Հայաստանի շրջափակումը շարունակվում է երկու ամսից ավելի, իսկ ԼՂԻՄ-ի շրջափակումը՝ արդեն մեկուկես տարի: Ստեղծված արտակարգ իրադրությունը պահանջեց Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի արտահերթ նստաշրջանի հրավիրում, որը սեպտեմբերի 17-ի իր նիստում շրջափակումը դատապարտեց որպես քաղաքական նպատակներ հետապնդող կազմակերպված ձեռնարկում:

Հայկական ԽՍՀ-ի և ԼՂԻՄ-ի շրջափակումը անհամատեղելի են միութենական պայմանագրի, ԽՍՀՄ սահմանադրության հետ: Արդի միջազգային իրավունքում շրջափակումը գնահատվում է որպես պատերազմի և ագրեսիայի ակտ: Ժամանակն է արդեն ի լուր ամենքի ասել, որ իր ընդգրկումով ու դաժանությամբ աննախադեպ այդ ձեռնարկումը սասանում է խորհրդային ֆեդերացիայի հիմքերը, անուղղելի վնաս հասցնում երկրի միջազգային վարկին:

Շրջափակումը խփում է նախ և առաջ Հայաստանի երկրաշարժից տուժած շրջանների բնակչությանը, երեխաներին, հիվանդներին, ծերերին, գաղթականներին: Այսօր Հայաստանում ավելի քան 700 հազար մարդ անօթևան է:

Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդը հավաստեց, որ ԽՄԿԿ Կենտկոմում երկու միութենական հանրապետությունների կոմկուսների կենտկոմների բյուրոների համատեղ նիստում ձեռք բերված ռեգիոնի իրադրության կարգավորման համաձայնություններից հետո էլ Ադրբեջանական ԽՍՀ-ն ոչ միայն չի կատարել իր պարտավորությունները, այլև լիովին շրջափակել է դեպի Հայկական ԽՍՀ տանող բոլոր երկաթուղիները և ավտոմոբիլային մայրուղիները:

Վերջին օրերին շրջափակումը էլ ավելի նրբանիար ձևեր է ստացել: Սեպտեմբերի 25-ից ադրբեջանական երկաթուղու մասնակի բացումը փաստորեն ոչինչ չտվեց: Հայաստանում ստացվեցին միայն նպատակային կերպով ընտրված բեռներ՝ փչացած մթերքներ, ջարդված տնակներ ու սարքավորումներ, ջրով լցված ցեմենտատարներ, խճաքար և ավազ: Չի առաքվել ոչ մի ցիստեռն վառելանյութ, իսկ սեպտեմբերի 30-ից ադրբեջանական կողմը կրկին փակել է Հայաստան տանող ուղիները: Փաստորեն կազմալուծված է հանրապետության ամբողջ կենսագործունեությունը: Խափանված են շինարարական-վերականգնման աշխատանքները երկրաշարժի գոտում: Չեն առաքվում պարեն և արդյունաբերական ապրանքներ: Հայաստանը զրկված է իր արտադրանքը երկրի սպառողներին առաքելու հնարավորությունից, որը հանրապետությանը թույլ չի տալիս կատարելու իր պայմանագրային պարտավորությունները:

Այս ճգնաժամային իրավիճակում կենտրոնական իշխանությունների և միութենական մարմինների ծայրահեղ դանդաղկոտությունը հարուցում է հայ ժողովրդի և երկրի բոլոր ազնիվ մարդկանց տարակուսանք ու վրդովմունք:

Երկաթուղիների և ավտոմոբիլային ճանապարհների ապաշրջափակման համար ամենավճռական միջոցները ձեռնարկելու փոխարեն մտացածին փաստեր են որոնում այդ հանցավոր ձեռնարկումն արդարացնելու համար: Այն վկայակոչումները, թե Հայաստանի շրջափակումը իբր պատասխան միջոցառում է եղել, չեն դիմանում ոչ մի քննադատության, քանզի աշխարհագրությանը քիչ թե շատ ծանոթ ամեն մի մարդ կհասկանա, որ դա պարզապես անհնար է: Մեղքի համահարթման քաղաքականության շարունակումը բացարձակապես սնանկ է: Այն լիովին խեղաթյուրում է պատկերացումը ռեգիոնի իսկական իրավիճակի մասին:

Մենք պաշտոնապես հայտարարում ենք, որ Հայկական ԽՍՀ-ի տարածքում թույլ չեն տրվում գնացքների կանոնավոր երթևեկությանը խոչընդոտելու դեպքեր, այդ թվում նաև Նախիջևանի ԻԽՍՀ գնացողների համար: Հայկական ԽՍՀ-ի տնտեսական շրջափակումը մեթոդաբար վարվող ուժային ճնշման քաղաքականության և քաղաքական ահաբեկման տրամաբանական շարունակությունն է, որն իրականացվում է մեկ նպատակով՝ փակուղի մտցնել ԼՂԻՄ-ի պրոբլեմի դեմոկրատական լուծումը: Մի՞թե պատահական է, որ երկու ժողովուրդներին ուղղված Մ. Ս. Գորբաչովի 1988 թվականի փետրվարյան դիմումին հաջորդեց Սումգայիթը, իսկ ԽՄԿԿ Կենտկոմում երկու հանրապետությունների կոմկուսների կենտկոմների բյուրոների անդամների հանդիպմանը անմիջապես հաջորդեց լիակատար շրջափակումը: Վերհիշենք, որ Սումգայիթի չարագույժ դեպքերին քաղաքական գնահատական չընտալու հետևանքով հնարավոր դարձան Ֆերգանայի և Նովի Ուզենի դեպքերը:

Ուրեմն այսօր մենք ի՞նչ նախադեպ ենք ստեղծում մեր լռությամբ և անգործունությամբ:

Մի՞թե այս ամենը չի տագնապեցնում մեր խիղճը, մեզ՝ երկրի պառլամենտին չի պարտավորեցնում անհապաղ կարգուկանոն հաստատել ռեգիոնում և խստորեն պատժել մեղավորներին, որպեսզի մեր երկրի ժողովուրդներին վստահություն ներշնչենք, որ ԽՍՀՄ նորընտիր Գերագույն խորհուրդը և կառավարությունը հաստատակամորեն հետևում են իրավական պետության ստեղծման հոչակված կուրսին:

Հայկական ԽՍՀ-ից ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատները պաշտպանում են դեպուտատ Վ. Կոլեսնիկովի առաջարկությունները և անհրաժեշտ են համարում.

1. Քաղաքական գնահատական տալ և դատապարտել տնտեսական շրջափակումը որպես անմարդկային, հակաօրինական ակտ, որը անթույլատրելի է Խորհրդային Միության հանրապետությունների փոխհարաբերություններում:

2. Անհապաղ ազդու միջոցներ ձեռնարկել Հայկական ԽՍՀ-ի իրավունքների պաշտպանության համար, որոնք բխում են ԽՍՀ Միության պարտավորություններից, նախատեսված են միութենական պայմանագրով և սահմանադրությամբ:

3. ԽՍՀՄ դատախազությանը հանձնարարել բացահայտելու և խիստ պատասխանատվության ենթարկելու Հայկական ԽՍՀ-ի շրջափակումը ոգեշնչողներին, դրա կազմակերպիչներին և կատարողներին:

4. ԽՍՀՄ Մինիստրների խորհրդին հարց առաջադրել Ադրբեջանական ԽՍՀ-ի բյուջեից փոխհատուցելու տնտեսական շրջափակմամբ Հայկական ԽՍՀ-ին պատճառված վնասը:

Լության մատնելը, շրջափակման կատարված փաստի քաղաքական գնահատումից խուսափելը հավասարազոր են ագրեսիայի խրախուսմանը, վերջում ասաց Հ. Ոսկանյանը: Երկրում նման ձեռնարկումների կրկնության կանխման երաշխիքների ստեղծման նպատակով Հայաստանից ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատները անհրաժեշտ են համարում ընդունել համապատասխան օրենք՝ «Խորհրդային ֆեդերացիայի սուբյեկտների փոխհարաբերություններում տնտեսական ճնշման անթույլատրելիության մասին»:

Հոկտեմբերի 3-ին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նստաշրջանում մինչև ուշ երեկո շարունակվում էր տրանսպորտի, արդյունաբերության անխափան աշխատանքի կայունացման և ապահովման մասին որոշման նախագծի քննարկումը:

(Արմենպրես)